

ձառ եւ Սարգիս զիրք: Իսկ փոքր զիրք, տետր, աղօթամատոյց, չարակնոց եւ սաղմոսարան, Մաշտոց եւ զանձարան Ծ-Կ (50-60), եւ այլ աւելի, եւ Աւետարան ԼԲ (32)» (ՅԻԶ. ԻԳ.):

Ուրեմն, գոնէ 132 զրչազիր զրած է ան, այսինքն տարին զրեթէ երկու ձեռագիր: Բնական է այս 132ին մէջ հաշուելու է զրչազիրութեամբ զրեալներն ալ: Արդ, մեզի հասած են 13 եւ 1 մասնակի Աւետարան, երկու մասնակի Ժողովածոյ, 3 եւ մէկ մասնակի Ճաշոց, 2 Շարական, Ժամագիրք Պատարագամատոյց, մասնակի զրչազիրութիւններ, եւ 23 ամբողջական զրչազիրներ: Ամբողջութեամբ 32 զրչազիրներ իր զրչէն բոլորովին կամ մասնակի, եւ եթէ ասոնց վրայ աւելցնենք նաեւ 1428ի կարծեցեալ Յայամաւորքը, այն ատեն հազիւ 33 զրչազիր հասած է մեզի Յովհ. Մանգասարենցի 132 զրչազիրներէն: Արդ, մեզի հասած կ'ըլլայ հազիւ մէկ չորրորդը մեր հնագոյն զրչազիրական հարստութեան: Որով մեզի հասած 20·000 զրչազիրները մաս կը կազմէին գոնէ 80·000 զրչազիրներու, որոնց 60·000ը ի սպառ փճացեր կորսուեր են: Այս ահարկու իրականութիւնը ա'լ աւելի սարսափելի կ'ըլլայ, երբ նկատի առնենք որ ԺԵ. դարուն զրուած 132 զրչազիրներէն միայն 32 մեզի հասեր են. կորուստը աւելի հին դարերէն՝ բնական է շատ աւելի խոշոր համեմատութեամբ պիտի ըլ-

լայ, եւ կրնանք առանց դժգոյն իսկ չափազանցութեան՝ ըսել որ Ե. դարէն մեր զրչազիրներուն ամբողջական կորուստը մինչեւ մեր օրերը հաշուելու ենք առ նըւազն 100·000 կամ 125·000 զրչազիր: Ի՞նչ հսկայական կորուստ...:

Յովհ. Մանգասարենցի 32 Աւետարաններէն միայն 13 հատ հասեր են մեզի, եւ հատ մըն ալ մասնակի: Ուրեմն Աւետարաններու պէս յարգուած եւ պահուած, ընտիր զրչութեամբ եւ անտարակոյս՝ ծաղկումով զրչազիրներէն 20 հատ փճացեր են, 1450ական թուականներէն մինչեւ մեր օրերը: 40 Յայամաւորքներէն հաստատ կերպով միայն իրմէ մասնակի զրչութիւն Յայամաւորք մը հասեր է: Արդարեւ զժուար է ինծի ասկէ աւելի ահաւոր, չմեցուցիչ մշակութային կորուստ երեւակայել: Հաւանաբար, իրմէ՝ հոս ու հոն նոր զրչազիրներ ալ գտնուին գեո. սակայն պէտք է յիշել, որ իբր մեզի հասած իր զրչազիրներէն ոմանք միայն յիշատակութեամբ ծանօթ են, եւ անոնց պատահածէն լուր մը չունինք, ինչպէս օրինակ Ջմիւռնիացի Սիմէօն Գառնիկեանի Աւետարանը կամ Լեւոն Մսերեանցի քով ի Մոսկուա տեսնուած Ժողովածոն, կամ թէ «Թորոս Աղբար»ի եւ «Նօտարք Հայոց»ի մէջ յիշուածները:

(Շար. 1)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

1900 ՏԱՐՈՒԱՆ

ԱՒԱՆԳԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Չնքուշի հայերն ունէին դարաւոր սովորութիւն մը, որ կը կոչուէր «լծի տակէն անցընել»:

Հայաստան ներգաղթած եւ ներկայիս Սփիւռքի մէջ վտարանդի ապրող Չնքուշի բոլոր հայերը չեն կրնար մոռնալ այդ սովորութիւնը, որովհետեւ անիկա մաս կը կազմէ իրենց մանկական, զարոյցական անմոռանալի, յաւիտ փայփայելի, ամենանուիրական յիշատակներուն:

Այդ սովորութիւնը ի դարձ կը զրուէր խորական խաղերու, ի մասնաւորի Չիկիկ կոչուած խաղին մէջ:

Չիկիկը ծնկախաղ եւ արմկախաղ մըն էր, աւելի ճիշտը՝ ծնկներու եւ արմուկներու կռիւ, ծնկներով եւ արմուկներով պատերազմ: Չնքուշի հայերուն ինքնատիպ, առանձնապատուկ խաղերէն մին, որ կը խաղցուէր երկու հակառակորդ խումբերու կողմէ, որոնք զոյգ թիւով անգամներէ կը բաղկանային, առնուազն ճական, երբեմն մինչեւ 10-12ական:

Կոռուղ խումբերէն մին կը մղէր յարձակողական եւ միւսը՝ պաշտպանողական կռիւ: Պաշտպանողական կռիւ մղող խումբը կ'ունենար հէլ (goal - նշանակէտ) մը, որուն շուրջ կը դառնար կռիւ: Հէլը կը խորհրդանշէր հայրենիք, զոր կը պաշտպանէր կոռուղ խումբերէն մին եւ զրաւել կ'ուզէր միւսը: Կոռուղ խումբերը կը խորհրդանշէին տարրեր ազգեր:

Այլ խօսքով՝ մանրանկար պատերազմ մըն էր, զոր կը մղէին Չիկիկ խաղացող խումբերը:

Չնքուշի Ս. Կարապետ Եկեղեցւոյ ընդարձակ բակին մէջ, Եկեղեցւոյ Ս. Մես-

րոպ զարոյցի աշակերտներու Չիկիկ խաղին հէլը կը կազմէր Եկեղեցւոյ հարաւային պատին տակ, աւազանի մատուռին վրայ նայող պատուհանին մօտ գտնուած տապանաքարերէն մին: Ի՞նչ զիտնայինք, ո՞վ մտքէն կ'անցընէր, թէ այսպէս տապանաքար (աստ-անդ ցրցքնուած) պիտի ըլլայինք, յաւիտենապէս պիտի զրկուէինք այդ սրբութիւններէն, որ խելք ընէինք այդ տապանաքարերու վրայի արձանագրութիւնները կարգալու: Ինչ թիւ միշտ այնպէս կու գայ, որ Չիկիկի մեր հէլը տապանաքարն էր Չնքուշի Յովհաննէս Գ. եպ. առաջնորդ-վանահօր (1788-1792), որ իր շատ կարճ պաշտօնավարութեան շրջանին, շատ խոշոր շինարարութիւններ է կատարած - վանքին մէջ աղբիւր է բերեր, վանքին մեծ օտան (դահլիճ) է կառուցեր, Չնքուշի դետակին Եղերքի (խանտակ) վանապատկան քաղաքներէն մին ծախու է առեր եւ երկու քաղաքներուն ալ ջուրն է շատցուցեր... եւ թաղուած է «Չնքուշի մէջ, Ս. Կարապետ Եկեղեցւոյ հովանոյն տակ» (Թորոս Աղբար, Բ. էջ 463):

Չիկիկի պատերազմը կը մղուէր երկու հակառակորդ կողմերու միջեւ հետեւեալ կերպով:

Յարձակող կողմի զինուորները իրենց ձախ ոտքը վեր բարձրացուցած, եւ աջ ոտքին ետեւէն իրենց աջ ձեռքով անոր բթամատն ամուր բռնած, ամէն կողմէ արշաւելով՝ յարձակման կը ձեռնարկէին՝ փորձելով յառաջանալ դէպի հէլը եւ զրաւել զայն:

Իսկ պաշտպանողական կռիւ մղող կող-

մի զինուորները, հեղինակները, իրենցմէ մէկը պահակ կանգնեցուցած հեղինակը, կէս ճամբան կը գիմակալէին յարձակողները, միեւնոյն ձեռով՝ աջ ձեռքով ամուր բռնած բթամատը վեր բարձրացուցած ձախ ոտքին, աջ ոտքին ետեւէն:

Եւ կը պարզուէր անհղ մարտի զարհուրելի տեսարան մը — 6-12 հոգիներու՝ դուրս ցցուած ծնկներով՝ յառաջանալու, յարձակելու օրինակ եւ նոյնքան թիւով մարդոց նոյն ձեռով զանոնք գիմակալէին ու ծնկներու եւ արմուկներու իրարու բախիլը: Իսկական մանրանկար պատկերազմ մը, սուրնամարտ մը՝ իրարու խոռոչուած երկու թշնամի բանակներու զինուորներուն միջեւ, այն տարբերութեամբ, որ Զիկիմի զինուորները երկաթէ արհեստական գէնք չունէին իրենց ձեռքին եւ ոչ ալ կանգնած էին երկու ոտքերու վրայ, այլ ծունկ ծնկի եւ արմուկ արմուկի կը հարուածէին իրենց թշնամին՝ կեցած մէկ ոտքի վրայ...: Սակայն պատերազմը պատերազմ էր, խմբական կռիւ, ընկերը ընկերով օդնութեան կը փութար, երբ ան նեղն էր ընկած, կամ մէկէ աւելի թշնամիներէ յարձակում էր կրած:

Ծնկներու եւ արմուկներու պատերազմի զինուորներէն ունէ մէկը սպաննուած կամ շարքէ հանուած կը ստիպուէր, եթէ հակառակորդին կամ հակառակորդներու ծնկներու եւ արմուկներու հարուածներուն տակ թող տար աջ ձեռքով բռնած իր ձախ ոտքին բթամատը:

Կը պատահէր, որ անհասարակ կռիւի մը մէջ, «թշնամիներու» հարստածները զինուոր մը գետին տապալէին, բայց ան դարձեալ յաջողէր թող չտալ իր ձախ ոտքին բթամատը... մինչեւ որ իր ընկերներէն մին կամ միւսը օդնութեան փութար իրեն եւ գինք ոտքի կանգնեցնելով ան կռիւը շարունակէր:

Հեղինակը մշտաբար թուէ կը հսկէր իրեն վստահուած նուիրական աւանդին վրայ: Ամէն անգամ, որ թշնամի մը յաջողէր ձեղքել պաշտպանողական գիծը եւ մօտենար հեղինակին, պահակը ակնթարթի մը

մէջ, ձախ ոտքը կը տանէր աջ ոտքին ետեւը եւ աջ ձեռքով բռնած անոր բթամատը, կը գիմակալէր՝ կռուի մէջ արդէն յոյնած թշնամին ու շարքէ կը հանէր կամ հեղինակը հեռացնէր զայն:

Կը պատահէր նաեւ, որ երբ իր ընկերներէն միոյն նեղն ընկած ըլլալը տեսնէր եւ հեղինակը որեւէ կողմէ վտանգ չսպասուէր, հեղինակը պահակը բոլորակապ նեղն ընկած իր ընկերով մը կամ ընկերներուն օդնութեան կը փութար՝ մէկ աչքը շարունակ պահելով հեղինակին վրայ, ուր կը վերադառնար իսկոյն, եթէ անոր վտանգ մը սպառնալը նշմարէր:

Զիկիմը կամ ծնկներու եւ արմուկներու պատերազմը, երբեմն կը տեւէր աւելի քան կէս ժամ եւ կը վերջանար միայն այն առիթով, երբ յարձակողները կը յաջողէին մէկիկ մէկիկ «սպաննելով» կամ շարքէ հանելով պաշտպանողական կռիւ միջոց կողմի զինուորները, գրաւել հեղինակը կամ թէ կը վերջանար յաղթանակովը պաշտպանողական կռիւ միջոցներուն, որոնք մէկիկ մէկիկ «սպաննած» կամ շարքէ հանած ըլլալով իրենց վրայ արշաւողներու մեծ մասը, մնացած 1-2ն ալ անձնատուր կ'ըլլային...:

Պատերազմի վերջաւորութեան, պարտուող կողմի զինուորներն ու հրամանատարը մէկիկ-մէկիկ կ'անցընէին լծին տակէն յաղթողներուն, որոնց զոյգ առ զոյգ կարգի շարուած եւ իրարու երկարած ու բռնած բազուկները կը ձեւացնէին լուծը:

Այս էր, ահա, մինչեւ 1915ի Մեծ եղեռնը, Չնքուշի մէջ պահպանուած «լծի տակէն անցընելու» աւանդական սովորութիւնը:

* * *

Եւ երբեք 1900 տարի:

Ն. Ք. առաջին դարուն, հայոց Արտաշիսեան թագաւորութեան հսկային՝ Մեծ Տիգրան Բ.ի աշխարհակալութեան հասնող նուաճումները, որոնք հայկական պետութեան սահմանները տարածած էին

Կասպից Ծովէն մինչեւ Յորդանան գետ ու Միջերկրական ծով, հազիւ 25 տարի տեւեցին (Ն. Ք. 95-70):

Աշխարհակալ Հոռմը չէր կրնար հանդուրժել ուրիշ աշխարհակալի մը դուրս թեւան եւ Մեծն Տիգրանի դէմ հանեց իր լեզունները, որոնք թէեւ առաջին արշաւանքին, Լուկուլլոս զօրավարի հրամանատարութեամբ, մինչեւ Տիգրանակերտը զրաւեցին (Ն. Ք. 69), պարտուեցան Մեծն Տիգրանէն Արտաշատի առջեւ: Սակայն երկրորդ արշաւանքին, Պոմպէոս զօրավարի հրամանատարութեամբ, պարտադրեցին Մեծն Տիգրանին՝ «պատուաւոր» հաշտութիւն մը կնքել Հոռմի հետ, անոր թողով իր բոլոր օտար տիրոջթիւնը, պարփակուելով Հայաստանի սահմաններուն մէջ (Ն. Ք. 66):

Մեծն Տիգրանի մահէն (Ն. Ք. 56) ետք, անոր յաջորդներուն օրով, Արեւմուտքի աշխարհակալ Հոռմին դէմ ցցուած էր արեւելեան հզօր պետութիւն մը՝ Պարթեւական Պարսկաստանը: Այս երկու հսկաները կը մրցէին իրարու հետ Հայաստանին տիրակալելու համար: Թէեւ Մեծն Տիգրանի որդին՝ Արտաւազդ Բ., ամէն ճարտարութիւն զործածեց օգտուելու համար անոնց հակառակութիւններէն, սակայն, ըլլալով անոնց միջեւ մղուած կռիւներուն թաղաքեմ, արիւնաքամ եղած Հայաստանը, չէր կրնար երկար տուել եւ հոռմայեցիները վերջ տուին հայոց Արտաշիսեան թագաւորութեան, մեր թուականութեան առաջին դարու սկիզբը (Յ. Տ. 1 թուականին):

Պարսիկները, առաւելագոյն չափով օգտուելու համար՝ Պետականութենէ զրկուած՝ հայոց հակահոռմէական տրամադրութիւններէն եւ, միաժամանակ, Հոռմի արշաւանքներուն դէմ թուած մը կանգնեցնելու նպատակաւ, ստեղծեցին՝ իրենց ազդեցութեան ենթակայ՝ հայկական պետութիւն մը (treffer state) — Յ. Ք. 51 թուականին: Երբ Պարսից Արշակունի Վաղարշ թագաւորը զահ բարձրացաւ, ան իր եղբայրը՝ Տրդատը Հայոց թագաւոր կարգեց եւ այսպիսով հիմը դրուե-

ցաւ Հայոց Արշակունեաց թագաւորութեան:

Հոռմին դիւր չեկաւ այս իրեն համար անհաճոյ իրադրութիւնը եւ աճապարեց իր լեզունները զրկել Հայաստան՝ իր սաղմին մէջ խեղդելու համար նորաստեղծ պետութիւնը:

Պետոս զօրավարի հոռմէական լեզունները արշաւեցին Հայաստան, սակայն պարտուեցան հայ քաջերու կողմէ, տակաւին Պարսից բանակները օդնութեան հասած:

* * *

Միջանկեալ մը:

ԾՈՓՔը, որ 2. դարուն Յուստինոսի կողմէ անուանեցաւ Դ. ՀԱՅՔ, Արշակունեաց Հայաստանի 15 նահանգներէն մին էր: Անոր մեծագոյն դաւաճներէն մին էր Մեծ Ծոփքը, որուն բերդաւանն էր Բնաբեղը:

Բնաբեղը միակ տեղանունն է, Մեծ Ծոփքը դաւաճին մէջ, որուն անուան յիշատակութիւնը կ'ընեն հայ եւ օտար պատմագէտներ՝ Ե. դարէն մինչեւ հիմա, եթէ չհաշուենք Անգղը (կամ Անգեղատուն), որ, նման Բնաբեղին, արքունի ոստան էր եւ Ծոփքը դաւաճի սահմանակից (տես Ալիշանի Քարտէսը, տպ. Վենետիկ 1849ին), սակայն մեր Ե. դարու մատենագիրներէն՝ Խորենացիէն եւ Փ. Բիւզանդէն՝ յիշուած է շարունակ որպէս առանձին գաւառ, անջատ Մեծ Ծոփքէն:

Արդ, բազմաժուտ գիտնական եւ անտարկելիօրէն արժանահաւատ բանասէր Հ. Ղևոնդ Արշան, վերոյիշեալ իր քարտէսին մէջ, Բնաբեղը գետեղած է Չնքուշին տեղը: Իսկ Հայաստանի բերդերու ուսումնասիրութիւնն իր մասնագիտութիւնն ըրած՝ Վենետիկի Միսիթարեան միաբանութեան անդամ՝ Հ. Միքայէլ Յովհաննէսեան, երկարատեւ եւ մանրակրկիտ պրպտումներէ ետք, «ձշռումներ Ծոփքի սահմաններուն եւ Բնաբեղ բերդի տեղւոյն» (Բազմալեզու, 1963, թիւ 9-12) իր յօդուածով կը հաստատէ, թէ ՃԻՇՏ է՝ Հայաստանի քաղաքներու եւ գիւղերու

տեղադրութեան մասին անվիճելիօրէն արժանահաւատ հեղինակ՝ Հ. Ղ. Ալիշանի այդ - Բնաբեղ-Ձմեռ - տեղադրութեան մը*:

Իսկ համաձայն ներկայիս վերապրող Ձնքուշցիներուն շրթունքներուն վրայ յամեցող նուիրական աւանդութեան մը՝ Ձնքուշը հիմնուած է Անիէն գաղթող հայերու խումբի մը կողմէ, Անիի առաջին գաղթին (Յ. Տ. 1065): (Տե՛ս այս մասին մեր «Ձմեռն ու կաշգործութիւնը» յօդուածը, Բազմավեպ 1963, քիւ 9-12):

* * *

Վերադառնանք մեր նիւթին:

Ըսինք վերեւ, թէ հայերու կողմէ ջախջախիչ պարտութիւն կրեցին Հայաստանի վրայ արշաւող հռոմէական լեգէոնականները, տակաւին Պարսից ուժերը օղնու-

*) Հաճոյքով տեղեկացանք, թէ մեր բարեկամ Հ. Մ. Յովհաննէսեանի՝ բերդերու մասին՝ երկուսիրութիւնը շուտով, առանձին հատորով, կը հրատարակուի Գաղուստ կիւլտէնիկան հիմնադրամի յատկացումով:

թեան հհասած: Այս դէպքը տեղի ունեցած է Յ. Տ. 62 թուականին:

Շարունակենք հետեւիլ այդ դէպքին. «Հռոմէական զօրքերի այդ ծանր պարտութիւնը վերածուեց կատարեալ խայտառկութեան, անպարտելի համարուող նրանց լեգէոններն անցան յաղթողների «լծի» տակով, որն այդ ժամանակ համարում էր ամենամեծ ստորացումը: Հայ զինուորներ տնկեցին երկու նիզակ, երրորդը ցրուեց նրանց վրայ, եւ այս եղանակով պատրաստուած «լծի» տակով հռոմէական զինուորներին ու հրամանատարներին անցկացրին ծնկաջօք» (Հայ ժողովրդի Պատմութիւն, Նրեւան, 1956, էջ 74):

1900 տարի առաջ, Հայաստանի մէջ պատահած վերոյիշեալ ահալնադրող դէպքը այնպիսի ցնցող տպաւորութիւն մը ձգեց, որ ազատատենչ Հայ ժողովրդի մտքին վրայ, որ անոր յիշատակը մինչեւ ի. դար պահպանուած էր Ձնքուշի հայոց մէջ - ըլլան անոնք Բնաբեղցիներու թէ Անեցիներու շառաւիղները:

Իրական փենումէն մը, հրաշքի համադր երեւոյթ մը:

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

ԶԱՐԾԱՀԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԻՑ

Ա.

ՍԻՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Հայ ժողովուրդն իր հնադարեան պատմութեան շրջանում յօրինել է բազմազան եւ զուգահեռ բանաստեղծութիւններ, որոնց մէջ առանձնայատուկ տեղ են զբաղում սիրային տաղերն ու քառեակները, որոնք անցնելով սերունդից սերունդ, տարբեր զուգահեռներով արտայայտել են հայրենակ քաղաքներում, աւաններում ու գիւղերում ապրող ժողովրդի կենցաղի եւ վարք ու բարքի յատկանշական դժերը:

Այդ քառեակների հիմնական նիւթը սէրն է, ուր հանդէս են գալիս սիրակարօտ եւ սիրատուր սրտերը, իրենց հոգեկան ապրումների տարբեր տրամադրութիւններով ու յոյզերով:

Հայ ժողովուրդը շատ է սիրել քառեակներ պատկերող սիրային դրականութիւնը, որոնք հետադաշում դրել են առնուել եւ հարստացրել ժողովրդական սիրային բանաստեղծութեան դանձարանը: Այդ է պատճառը, որ մեզանում բաւական հարուստ են սիրային տաղերը, որոնք դրաւիչ են իրենց վառ պատկերաւորութեամբ, զգացմունքի ջերմութեամբ եւ ոճային պարզութեամբ:

Այդ սիրային տաղերում երեւան եկող առանձին բառերն ու արտայայտութիւնները, հայ ժողովրդի լեզուական արուեստի զարգացման ուսումնասիրութեան համար, արժէքաւոր նիւթեր են:

Ընդգծուած էական յատկանիշներով օժտուած են նաեւ Չարմահալի հայ ժողովրդական բանահիւսութեան սիրային քառեակները, որոնք իրենց քնարական բովանդակութեամբ, արտայայտում են զեղջուկ սիրող սրտերի ջերմ եւ խորունկ

զգացումները եւ նրանց հոգեկան անկեղծ ապրումներն ու խոհերը:

Այդ քառեակների մեծ մասը հայ ժողովրդի բազմադարեան հարուստ բանահիւսութեան թանկագին մնացորդներ են, որոնց 1605 թուին, Շահ-Աբրահամ Մեծի հրամանով կատարուած բռնի գաղթի շրջանում, հայ զեղջուկները Հայաստանից բերել են Չարմահալ եւ 361 երկար տարիներ հնչել են հայ աղջիկների, հարսների եւ երիտասարդների շրթների վրայ:

Սակայն, այդ սիրային քառեակները ժամանակին դրի չառնուելու պատճառով, մեծ մասամբ, մատնուել են մոռացութեան, չառնուել էլ, մինչեւ օրս, չեն հրատարակուել: Ահա այդ անտիպ քառեակները 1919 եւ 1945 թուերին, Չարմահալի հայաբնակ գիւղերում, զեղջուկներից դրի առինք եւ առաջին անգամ հրատարակում ենք «Բազմավեպ»-ում, որոնք ներկայացնում են հետեւեալ պատկերները.

1.

Լուսնեա՛գ, դու եաւաշ գնա՛,
Սարերու վրէժով գնա՛.
Հընդըստանում եար ունեմ,
Ասա՛ իրեմ կարօցդ էլ եմ:

2.

Անուշ հովեր եարս բերէփ,
Ղարիք եարիս մեր տուն բերէփ.
Ազիզ ջանիս քեզ տուն բերէփ,
Անճուն աչկերուս քուն բերէփ:

3.

Օ՛յ ջա՛ն տղայ, տավրարձ տղայ,
Իմ սրդովը մարած տղայ.
Հսեր (հումսեր) ու կարափ, լօշ հաց
Անուշ անես, չօրան տղայ: [բերեմ.]

4.

Հովե՛ր, օ՛յ, անուշ հովեր,
Եարիցս մէ լուր բերէփ.